Հավելված

ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի 30-ի N 1773 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ, ԽՄԵԼՈՒ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կանոնակարգվում է «Հարկերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան հարկ վճարողների կողմից սպառողներին բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների վերաբերյալ հարկային մարմին տեղեկությունների ներկայացնելու կարգը:

2. Սույն կարգի համաձայն տեղեկություններ ներկայացնում են բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործունեություն իրականացնող վճարողները:

3. Հարկ վճարողներն իրենց կողմից սպառողներին բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի մատակարարման գործարքների վերաբերյալ տեղեկու-թյունները ներկայացնում են իրենց հաշվառման վայրի հարկային մարմին (այսուհետ՝ հարկային տեսչություն): Տեղեկությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ «Էմ էս էքսելե (MS Exel) ֆայլի տեսքով:

4. Սպառողներին բնական գազի, էլեկտրական էներգիայի, խմելու և ոռոգման ջրի, մատակարարման գործարքների վերաբերյալ տեղեկությունները հարկային տեսչություն ներկայացնում են յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

5. Հարկ վճարողները հարկային տեսչություն տեղեկությունները ներկայացնում են՝

1) սպառողներին (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության մասով) բնական գազի մատակարարման գործարքների վերաբերյալ՝ համաձայն N 1 ձևի.

2) ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողներին, այդ գործունեության մասով բնական գազի մատակարարման գործարքների վերաբերյալ՝ համաձայն N 2 ձևի։ Ընդ որում, ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնողներին մատակարարված բնական գազի գործարքների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ըստ յուրաքանչյուր գազալցման (գազալիցքավորման) կայանի (կետի).

3) սպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարման գործարքների վերաբերյալ՝ համաձայն N 3 ձևի.

4) սպառողներին խմելու ջրի մատակարարման գործարքների վերաբերյալ՝ համաձայն N 4 ձևի.

5) սպառողներին ոռոգման ջրի մատակարարման գործարքների վերաբերյալ՝ համաձայն N 5 ձևի։

6. Հարկ վճարողների կողմից նախկինում ներկայացված տեղեկություններում սխալների հայտնաբերման դեպքում կարող են ներկայացվել ճշտված տեղեկություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ ճշգրտված տեղեկությունները վերաբերում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններին։

7. Հարկային տեսչությունն ստացված տեղեկությունները երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային կապի միջոցով ներկայացնում է վերադաս հարկային մարմին։

8. Վերադաս հարկային մարմինը հարկային տեսչությունից ստացված տեղեկությունների հետագա օգտագործումն իրականացնում է վերադաս հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև N 1

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ) ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարկ վճարողի անվանումը								
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)								
3. Տեղեկություն ներկայացնելու ժամանակաշրջանը	տարի					թ.	եռամսյակ	

NN ը/կ	Սպառող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ		Չափի միավորը (խոր.մետր)	Իրացված բնական գազի ծավալը	Միավորի վաճառքի գինը` առանց ԱԱՀ-ի (դրամ)	Ընդհանուր արժեքը` առանց ԱԱՀ-ի (դրամ)
	անվանումը կամ անունը և ազգանունը	ՀՎՀՀ-ն				

Հարկ վճարողի

________________________ ________________ ______________________________
(ներկայացուցչի պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_______ ___________________ 20 թ.

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱԶԱԼՑՄԱՆ (ԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻՆ՝ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարկ վճարողի անվանումը									
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)									
3. Տեղեկություն ներկայացնելու ժամանակաշրջանը	տարի					թ.	եռամսյակ		

NN ը/կ	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)	Հարկ վճարողի անվանումը	Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) կայանի գտնվելու վայրը (հասցեն)	Մատակարարված բնական գազի ֆիզիկական ծավալը (քանակությունը) (խոր.մետր)	Մեկ խոր.մետր գազի արժեքը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)	Ընդամենը արժեքը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)

Հարկ վճարողի

____________________ (ներկայացուցչի պաշտոնը) _______________ (ստորագրությունը) _________________________ (անունը, ազգանունը)

_______ ___________________ 20 թ.

Ձև N 3

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարկ վճարողի անվանումը														
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)														
3. Տեղեկություն ներկայացնելու ժամանակաշրջանը	տարի					թ.	եռամսյակ							

NN ը/կ	Սպառող կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Սպառող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն	Չափի միավորը, կվտ/ժ	Իրացված էլեկտրաէներգիայի ծավալը (քանակը)		Իրացված էլեկտրաէներգիայի արժեքը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)		ԱԱՀ-ի գումարը (դրամ)	
				ցերեկային	գիշերային	ցերեկային	գիշերային	ցերեկային	գիշերային

Հարկ վճարողի

_____ (ներկայացուցչի պաշտոնը) _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 4

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարկ վճարողի անվանումը												
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)												
3. Տեղեկություն ներկայացնելու ժամանակաշրջանը	տարի					թ.	եռամսյակ					

NN ը/կ	Սպառող կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անձի անունը, ազգանունը	Սպառող կազմակերպու-թյան, անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն	Չափի միավորը	Իրացված ջրի ծավալը (քանակու-թյունը)	Միավորի վաճառքի գինը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)	Ընդամենը արժեքը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)

Հարկ վճարողի

_____ _____ _____

(ներկայացուցչի պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 5

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարկ վճարողի անվանումը								
2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)								
3. Տեղեկություն ներկայացնելու ժամանակաշրջանը	տարի					թ.	եռամսյակ	

NN ը/կ	Սպառող կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	Սպառող կազմակերպու-թյան կամ անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն	Չափի միավորը	Իրացված ջրի ծավալը (քանակը)	Միավորի վաճառքի գինը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)	Ընդամենը արժեքը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)
1	2	3	4	5	6	7

Հարկ վճարողի

_____ _____ _____

(ներկայացուցչի պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.